Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-1 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 51 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 9 դեպքի վարում, 20 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 50 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 51)՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել են նաեւ անցած կենսափորձի վերարժևորմանն ուղղված, արժեքային համակարգի քննարկմանը և խմբային արժեքների դուրսբերմանն ուղղված, խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև իրականացվել է երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ և պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երեւակայության հետազոտմանը եւ զարգացմանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:
  Բուժքրոջ կողմից ցերեկային կենտրոնում պարբերաբար իրականացվել է շահառուների զարկերակային ճնշման չափում, օքսիմետրիա, թվով 7 շահառուի ներարկում: Հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում՝ «Առողջ ապրելակերպ», Վահանաձեւ գեղձ» թեմաներով քննարկումներ:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 8 խմբակ՝
  - Գրական
  - Երգի,
  - Կինեզալոգիայի,
  - Հմուտ ձեռքերի,
  - Կարի,

- Հոգևոր զրույցների,
- Առողջ ապրելակերպի,
- Աշուղական խմբակ, որոնց մասնակցել է 51 շահառու:

Կազմակերպվել է թվով 33 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 51 շահառու:
Իրականացված միջոցառումներն են՝

1. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Ազգային նվագարանների պետական համույթի համերգը նվիրված Հ. Բադալյանի 100 ամյակին
2. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը՝ Արմենիա միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում
3. Առնո Բաբաջանյանի համերգասրահում «Ակունք» ազգագրական համույթի համերգ (Վանի և Շատախի երգերը)
4. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Երևանյան միջազգային երաժշտական փառատոն
5. Հայաստանի կույրերի միավորման մշակույթի կենտրոնում «Իմ սրտի Երևանը» համերգ
6. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Հայաստանի ազագային Ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը 16-րդ միջազգայիմ երաժշտական փառատոնի շրջանակներում, Ռեքվիեմ
7. Կամերային երաժշտության տուն, Հնագույն երաժշտություն «Տաղարան» համույթի համերգ
8. Կամերայի երաժշտության տուն Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտություն միջազգային փառատոնի համերգներին
9. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում «Գարնանային հայտնի և անհայտ» Ջազի դասական և հանրաճանաչ երաժշտության համադրություն
10. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում Դենիս Մացուև՝ Մենահամերգ
11. Կամերայի երաժշտության տուն՝ Կոմիտասի անվան ազգային քառյակ
12. Կամերայի երաժշտության տուն՝ Սերբիական և հայկական դաշնամուրային երաժշտություն
13. Արամ Խաչատրյանի համերգասրահ՝ «Ակունք» ազգագրական պետական համույթի համերգ
14. Կամերայի երաժշտության տուն՝ հնագույն երաժշտություն «Տաղարան» համույթ Գուսան Շահեն
15. Արամ Խաչատրյան համերգասրահ Հայաստանի ազագային Ֆիլհարմոնիկ նվագախումբ, Լևոն Չաուշյանի հիշատակին նվիրված համերգ
16. Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը նվիրված երեխաների իրավունքների պաշտպանությանը
17. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Ալթունյանի անվան երգի պարի համույթի համերգ
18. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Հայաստանի ազգային Ֆիլհարմոնիկ նվագախումբ Դ. Ղազարյան 85 ամյակին նվիրված համերգ
19. Արամ Խաչատրյան համերգասրահ Հայաստանի ազագային սիմֆոնիկ նվագախումբ «Առաջին» 12-րդ միջազգային երաժշտական փառատոն
20. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Հայաստանի ազագային Ֆիլհարմոնիկ նվագախումբ, «Տարվա եղանակներ» համերգին
21. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ Սր Կառլ Ջենքինս «Սիմֆոնիկ ադիեմուս»
22. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Հայաստանի ազագային Ֆիլհարմոնիկ նվագախումբ Հրաչուհի Բասենց /սոպրանո/ Շտռաուսի վերջին 4 երգերը
23. Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Գ. Գասպարյանի անվան երգիչների մրցույթի գալա համերգ
24. Տարեցների միջազգային օրվան նվիրված տոնական միջոցառում՝ Կոմիտասի անվան այգում,

25. Գ Նարեկացի Արվեստի միությունում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ցերեկային կենտրոնների շահառուների «Գոհարներ» երգչախմբի համերգը՝ խմբավար Գոհար Հարությունյան
26. Էքսկուրսիա դեպի Ծաղկեվանք՝ Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ
27. Ուխտագնացություն Սբ. Հռիփսիմե և Սբ. Գայանե եկեղեցիներ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, այցելություն Ռուբեն Սևակի և Խրիմյան Հայրիկի թանգարաններ
28. Էքսկուրսիա Գյումրի. «Յոթ վերք» եկեղեցի, «Ծարս ու շիտակ» թանգարան, Հառիճավանք
29. Շահառու Նազիկ Հայրապետյանի ծննդյան տարեդարձի նշում՝ Խաշ փարթի
30. Ամանորի միջոցառումներ
31. Էքսկուրսիա Լոռի՝ Հաղպատ, Սանահին, Հ. Թումանյանի տուն-թանգարան
32. Միջոցառում ցերեկային կենտրոնում՝ աճպարարի մասնակցությամբ
33. Գրական միջոցառում՝ նվիրված բանաստեղծ Աշոտ Միրիջանյանին, հնչեցին նրա ստեղծագործությունները, ներկայացվեց ինքնակենսագրությունը՝ իր կողմից:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 15 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը

- Տարեցների միջազգային օր. (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rhjvhp
- Դասընթաց առողջ ապրելակերպ. (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/smxttr)
- Ուխտագնացություն Սբ. Էջմիածին. (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/mkjamd)
- Հմուտ ձեռքեր խմբակի աշխատանքային մեկ օր (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ http://surl.li/hlvahs)
- Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Երևանցի տարեցներ» մրցույթին http://surl.li/jubrpi :
- Աքանչելի օր Ծաղկաձորում http://surl.li/twwbuk
- Միջոցառում Ավան ցերեկային կենտրոնում http://surl.li/yiqmkp :
- Ամերիկայի ձայն արձագանքը Նոր Նորք սոցիալական տան բնակչի մասին http://surl.li/mqtkez
- Սոցիալական աշխատողների տոնին նվիրված հաղորդում, որում ներկայացված է մեր առօրյայից մի հատված http://surl.li/xnznwf
- Նախատոնական տրամադրություն http://surl.li/supczk
- Տոնական տրամադրություն է տիրում, երգուպարով դիմավորեցինք տոնական ամիսը http://surl.li/szgqdk
- Այց կատարեցինք Պատմության թանգարան՝ դիտելու «Մայր Աստվածություն Անահիտից մինչև Մարիամ» ցուցադրությունը http://surl.li/tawfez

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Չորրորդ եռամսյակի ընթացքում հոգեբանը սեփական նախաձեռնությամբ անցել է 3 ժամ անհատական սուպերվիզիա, 2 ժամ խմբային սուպերվիզիա և 6 ժամ բալինտյան խումբ:
- ✓ Հոգեբանի մասնակցությամբ ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում կայացած «Բրեյնսփոթինգ միջազգային ինտենսիվ» :
- ✓ Սոցիալական աշխատողները ամեն ամիս մասնակցել են ՄՍԾՏԿ աջակցության խորհրդի նիստերին:
- ✓ Աշխատակազմի համար կազմակերպվել է հերթական հոգեբանական թրեյնինգը՝ ուղղված միջանձնային փոխարաբերությունների բարելավմանը, կոնֆլիկտների հաղթահարմանը:
- ✓ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորը 2024թ նոյեմբեր 1-2-ը մասնակցել է Առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) դասընթացին, դասընթացավար՝ Դր.Դիմա Թուհամին վերականգնողական և առողջ ծերացման ծրագրի համակարգող, Լյուցեռնի համալսարան, Շվեյցարիա:
- ✓ Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումների շարունական մասնակցություն՝ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիան, Գերիատրիայի և գերոնտոլոգիայի հայկական ասոցիացիայի և Հայ օգնության ֆոնդի հետ միասին, «Գերիատրիա. համակողմանի մոտեցում հիվանդությունների կառավարմանը» խորագրով ամենամյա կոնֆերանսին մասնակցել են Նոնենի Ցկ-ի բուժքույրերը եւ Նոր Նորք սուպերվիզորը:
- ✓ Պաշտպանության մոնիթորինգի իրականցում Նոր Նորք և Ավան համայնքները սպասարկող սոցիալական աշխատողների կողմից՝ Մարգո Աբաղյան, Հասմիկ Ադամյան:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 51/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 43 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 51 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 19 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 5.1 | Կինեզալոգիա | 40 |
| 5. 2 | Գրական | 45 |
| 5.3 | Երգի | 25 |
| 5.4 | Հոգևոր զրույցներ | 50 |
| 5.5 | Հմուտ ձեռքեր | 42 |
| 5.6 | Կարի | 4 |
| 5.7 | Աշուղական | 18 |
| 5.10 | Առողջ ապրելակերպի | 19 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 51 |
| 7. | Այլ ծառայություն (Բաղնիքից շարունակաբար օգտվել են) | 15 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «18»12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)